ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Փէպրուար

2011
Ս. Էջմիածին

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ
պատմական գիտ. դոկտոր

# ԲԱՔՎԻ 1918 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1918 թ. սեպտեմբերին թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումից հետո այնտեղ տեղի ունեցած հայկական կոտորածների եւ հարակից դեպքերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Բաքվում արտակարգ իրավիճակների ղեկավար, օսմանյան բանակի ավագ լեյտենանտ, ազգությամբ գերմանացի Պարաքվինը: Ինչպես նա վկայում էր սեպտեմբերի 26-ին գեներալ-լեյտենանտ ֆոն Ջեկտին ուղարկված իր ընդարձակ տեղեկագրում[1], դեռ օգոստոսի 23-ին Մյուրցիլ փաշան իրեն հաղորդել էր, որ թաթարները մտադրվել էին թուրքական զորքի՝ Բաքու մտնելուն պես սկսել հայերի կոտորածը: Պարաքվինն այդ մասին բազմիցս տեղեկացրել էր դեպի Բաքու շարժվող թուրքական դիվիզիայի գլխավոր հրամանատար Նուրի փաշային՝ խնդրելով կանխիչ միջոցառումներ ձեռնարկել, եւ բացի այդ նրան էր ներկայացրել քաղաքի գրավման հետ կապված միջոցառումների մի ծրագիր, որի դեպքում սկզբից եւեթ կբացառվեին սպանդն ու կողոպուտը: Նուրի փաշան, սակայն, անտարբեր էր զտնվել թե նրա նախազգուշացումների եւ թե վերոնշյալ ծրագրի հանդեպ: Քաղաքի թաթարների մեծագույն մասը, ինչպես վկայում էր Պարաքվինը, բնակվում էր բարձր, 2 կմ երկարություն ունեցող պարիսպներով մեկուսացված մի թաղամասում, եւ թաղամասի մուտքերը գրավելու միջոցով ջարդարարներին վտանգազերծելը որեւէ դժվարություն չէր ներկայացնում: Հասկանալի է, որ նրա այդ առաջարկը նույնպես չէր ընդունվել:

Ըստ Պարաքվինի հաղորդման՝ նախքան թուրքական զորքերի Բաքու մտնելը սեպտեմբերի 16-ին, Բաքվում տներում շարունակ կրակոցներ էին լսվում, մինչդեռ քաղաքի մոտ, մի բարձունքի վրա տեղակայված թուրքական հետեւակային գունդն ու մյուս զորամասերը դրանց հանդեպ միանգամայն անտարբեր կերպով զբաղված էին մահմեդական Կուրբան-բայրամ տոնին նվիրված՝ ժամեր շարունակ տեւող շքերթով:

Սեպտեմբերի 17-ի առավոտյան, երբ դեռ թուրքական զորքը քաղաք չէր մտել, թաթարական ամբոխն արդեն սկսել էր հայ բնակչության զանգվածային սպանդը, հետապնդումներն ու կողոպուտը, իսկ կեսօրից քաղաք մտած թուրք զինվորները բնավ չէին փորձում խանգարել: Ավելին, նրանք նույնպես միանում էին թալանին[2]: «Փոխանակ բոլոր միջոց-

1 Տե՛ս "Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstȣcke", Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 441-446:

2 «Փողոցներում գրեթե մարդ չկար,- նշում էր Պարաքվինը Բաքվի գրավման ժամանակ մարտական գործողությունների վայր դարձած արվարձաններից մեկում այդ օրը առավոտյան իր կատարած շրջագայությունից հետո:- Խանութներն ու կրպակները համարյա առանց բացառության թալանված էին: Տարբեր տեղերում թալանված իրերի կույտեր էին կուտակված, որոնք հավանաբար թաթար կողոպտիչներից էին խլվել եւ մասամբ հսկվում էին առանձին թուրք զինվորների կողմից: ... Զինվորներն ու թաթարներն անարգել փոխադրում էին եւ տանում էին՝ ինչ իրենց դուր էր գալիս: Արդեն այդ շրջագայության ժամանակ ի հայտ եկան մեծ անկարգությունների անուրանալի

ներով քաղաքում կարգ ու կանոնի հաստատմամբ զբաղվելու, փաշաները, քաղաքի պարեկը, գլխավոր շտաբի բոլոր սպաները անգործ թրեւ էին գալիս հյուրանոցի սրահներում,- գրում է Դարաքվինը:- երբ բողոքներ եւ խնդրանքներ էին ուղղվում Նուրիին կամ պարեկին, դրանք այնպիսի ներքին անտարբերության էին հանդիպում, որ իսկույն եւեթ ակնհայտ էր դառնում լուրջ նախաձախնդրության եւ ցանկության բացակայությունը: Կազմակերպվեց մի մեծ ճաշկերույթ, որին մասնակցեցին բոլոր գեներալները եւ շտաբները քաղաքի պարեկի հետ միասին: Երգվեց «Կովկաս» երգը: Անթաքույց հրճվանքով ինձ ներկայացրեցին դրա բովանդակությունը, այն է՝ Թուրքիան այսուհետ դարձյալ տեր է դառնում իր հին սեփականությանը՝ Կովկասին: Ճաշկերույթի ժամանակ եւ դրանից հետո քաղաքում սպանդն ու թալանը շարունակվում էր... : Ես չեմ կարող չհիշատակել բազմիցս բարձրաձայն հնչեցված այն տեսակետը, որ թուրքական ղեկավարությունը թաթարներին կամենում էր հնարավորություն տալ վրեժ լուծել հայերից»[3]:

Ինչպես փաստում էր Դարաքվինը, սպանդի, թալանի եւ բռնաբարությունների անարգել ընթացքը խրախուսվում էր զորքի անգործությամբ եւ նաեւ բազմաթիվ թուրք զինվորների մասնակցությամբ: Այդ պայմաններում հայերի դեմ զանգվածային գործողությունները սպառնում էին վերածվել առհասարակ քրիստոնյաների հետապնդումների: Քաղաքում գտնվող՝ չեզոք երկրների հյուպատոսներն ու մյուս օտարերկրացիները, որոնց մեծ մասը հավաքվել էր Մետրոպոլ հյուրանոցում, օգնություն էին ակնկալում գերմանացիներից, մինչդեռ վերջիններս նույնպես ապահովված չէին, եւ Դարաքվինը կարողանում է հասնել միայն այն բանին, որ առանձին գերմանացիների բնակարանների մոտ պահակակետեր կանգնեցվեն: Նա մի գերմանական ընտանիքի խնդրանքով պահակակետ է կանգնեցնում նաեւ մի երիտասարդ հայ իրավաբանի տան մոտ, որին թաթարները նախկինում բազմիցս սպառնալիքներ էին ուղղել, իսկ տանտիրոջը տեղափոխում է Մետրոպոլ հյուրանոցը: Երեկոյան, այնուամենայնիվ, պարզ է դառնում, որ զենքի սպառնալիքի ներքո կողոպտվել էին մինչեւ իսկ մի շարք գերմանացիների բնակարաններ: Գերմանացիների կյանքի եւ գույքի ապահովման առնչությամբ Նուրի փաշային ուղղված՝ Դարաքվինի վճռական բողոքներն ու պահանջները, ի վերջո, որոշ արդյունք տալիս են: Քաղաքի պարեկը հեռացվում է, եւ նրա փոխարեն պարեկ է նշանակվում Նասիմ բեյը: Քաղաք են ուղարկվում սպաներ եւ նոր գնդեր: Հյուրանոցի առջեւ մի թաթար կողոպտիչ ցուցադրաբար կախաղան է հանվում: Այդ նույն ժամանակ, սակայն, քաղաքում կրակոցներն ու աղմուկը շարունակ ավելի մեծ չափեր էին ընդունում: Հատկանշական է, որ Նուրի փաշայի կարգադրությամբ զուգահեռաբար վերոնշյալ մահմեդական տոնի առթիվ կազամակերպվում էին հրազենային համազարկեր, ինչը նա պատրվակ էր դարձնում քաղաքի տարբեր վայրերում լսվող կրակոցները նույնպես այդ կերպ պատճառաբանելու համար:

Դարաքվինի բազմաթիվ բողոքներն ու պահանջները, սակայն, որեւէ էական արդ-

---

հերքերը: Ճանապարհին ընկած էին երկու սպանված երեխա: Մի կողմնակի նրբանցքում անմիջապես մեր կողքին որոտաց մի կրակոց: Մի պատուհանից կանայք հուսահատ կերպով օգնություն էին կանչում: Մեր ավտոմեքենաները կանգնեցին, մենք շտապեցինք տուն, բայց ոճրագործները դեպի հերին կողմն էին փախել: Արդեն այն ժամանակ տիրում էր այն համընդհանուր համոզումը, որ քաղաքում յուրաքանչյուր կարգ ու կարգապահություն վերացել էր, եւ քրիստոնյա բնակչությունը թալանվում, բռնաբարվում ու սպանդի էր ենթարկվում»: Անդ, էջ 441-442:

3 Անդ, էջ 443:

յունքի չհանգեցնելով, ի վերջո պետք է նրա դեմ ուղղվեին: Սեպտեմբերի 18-ի առավոտյան հայտնվում է Արեւելյան բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Հալիլ փաշայի համհարզը եւ նրան է հանձնում սեպտեմբերի 17-ով թվագրված՝ նրա պաշտոնազրկման հրամանը, որն ուներ հետեւյալ բովանդակությունը. «Ձեր պահվածքը եւ բազմաթիվ բարեկամ ու օտար մարդկանց ներկայությամբ իսլամական բանակի գլխավոր հրամանատար նորին գերազանցություն Նուրի Փաշայի դեմ ուղղված ձեր խոսքերը, ինչպես նաեւ Նուրի փաշայի պաշտոնական բողոքը ստիպում են ինձ վերջ դնել արտակարգ իրավիճակների ղեկավարի՝ Ձեր պաշտոնին: Դուք այսուհետեւ կլինեք գլխավոր շտաբի տրամադրության ներքո: Ես նրանց արդեն հեռագրել եմ»[4] : Հրամանի կտրուկ բովանդակությունից ելնելով՝ Պարաքվինն անհնար է համարում իր ծառայությունը շարունակել մինչեւ գերմանական կառավարությանն այդ մասին տեղեկացնելը եւ պատասխան ստանալը: Ուստի, իր պարտականությունները փոխանցելով մի թուրքի՝ ավագ լեյտենանտ Բասրի բեյին, նա նույն օրը եւեթ հեռանում է քաղաքից:

Պարաքվինի՝ իբրեւ ականատեսի վկայությունները մի շարք ուշագրավ մանրամասներ են հաղորդում Բաքվում կատարվող իրադարձությունների վերաբերյալ՝ միաժամանակ փաստելով, որ այնտեղ հայերի կոտորածը վաղօրոք նախապատրաստված էր եւ իրագործվում էր թուրքական կանոնավոր բանակի՝ Նուրի փաշայի ու նրա զինվորականության աջակցությամբ[5]: «Անկարգությունները մեծ մասամբ տեղի էին ունենում տների ներսում,- գրում էր նա:- Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք մեծ մասամբ լցված էին փողոցների անկյուններում, այնպես որ հաճախ միայն հոտի միջոցով էին իրենց վրա ուշադրություն բեւեռում: Մի տեղ ես տեսա յոթ դիեր, որոնք, մեծ մասամբ մերկ վիճակում, կիտված էին միմյանց վրա: Նրանց մեջ կային երեխաներ եւ մի ծնունդկան: Գրեթե բոլոր դիակներն ունեին արյունահոսված տեղեր, որոնք առաջացել էին խզակոթի հարվածներից, եւ նաեւ ծակծկված էին: Նկուղներից դիերի հոտ էր փչում: Ես պետք է ընդգծեմ, որ սպանդի հետքերով գնալու համար շատ քիչ ժամանակ ունեի, քանի որ բոլոր կողմերից հեղեղված էի օգնության կանչերով: Այնուհանդերձ, անգամ իմ կարճ շրջագայությունների ժամանակ ես հանդիպում էի նախճիրի՝ այդ ակներեւ ապացույցներին: Փողոցները հատելու ժամանակ առանց այլեւայլի այն տպավորությունն էր համակում, որ բոլոր տները՝ նկուղից մինչեւ տանիք, թալանված էին: ... Մի գերմանացի ինձ պատմեց, որ նա Նուրի փաշայի համհարզի հետ մտել է մի տուն, որտեղ, առանց տարիքի եւ սեռի խտրության, սպանված ընկած էին 13 վրացիներ: Երբ նա մատնանշել էր, որ նրանք վրացիներ, այսինքն՝

4 Անդ, էջ 446:

5 «Բաքվում ծանր զանցառություններն ու նողկալի իրադարձությունները չքմեղացնելու եւ քաղաքի գրոհման հետ կապելու՝ թուրքական կողմի փորձերի առնչությամբ,- գրում էր Պարաքվինը գեներալ ֆոն Ջեկտին ուղղված՝ իր վերոնշյալ նամակում,- ես կկամենայի դարձյալ ընդգծել, որ կոտորածը դեռ շաբաթներ առաջ ծանուցվել էր եւ իրականացվեց առանց թուրքական առաջխաղացման հետ որեւէ առնչություն ունենալու: Հիմնավորված չէ նաեւ այն պատճառաբանությունը, թե զորամասերին թույլ չեն տվել քաղաք մտնել, քանի որ նրանց հանդեպ վստահություն չէր տածվում: Անշուշտ չէր կարելի զինվորներին փոքր պարեկախմբերով քաղաք ուղարկել: Որտեղ դա տեղի ունեցավ՝ թուրք զինվորականությունը եռանդագին կերպով մասնակցեց կողոպուտին ու անարգումներին: Եթե նրանց գումարտակներով տեղակայեին մեծ հրապարակների վրա, եւ այնտեղից սպաների ղեկավարությամբ ուղարկեին մեծ խմբերով, կարգ ու կանոնը կվերականգնվեր, եւ զորքը կպահվեր վերահսկողության ներքո»: Անդ, էջ 445-446:

Գերմանիայի պաշտպանյալներ էին, ստացել էր հետեւյալ պատասխանը. «Նրանց համարել են հայեր»[6]:

Թե Բաքվում հայերն ինչպիսի հետեւողականությամբ ու անգթությամբ էին հետապնդվում, եւ թե նաեւ գերմանացի դաշնակցի հանդեպ թուրքերն ինչպիսի «պատկառանք» ունեին, վկայում էր նաեւ երկու գերմանացիների գնդակահարության փաստը: Ըստ դանիական հյուպատոսի հաղորդման՝ նրանց տանը հայ զինվորներ էին ամրացել ու պաշտպանվում: Թուրքերի մոտենալու ժամանակ նրանք դիմել էին փախուստի, իսկ գերմանացի տանտերերն առանց այլեւայլի, առանց հանգամանքների պարզաբանման ու հարցաքննության գնդակահարվել էին: Մեկ այլ դեպքում մի գերմանուհու հայ ամուսնուն սպանել էին, իսկ կնոջը երկու երեխաների հետ միասին առեւանգել, որոնք այդպես էլ չէին հայտնաբերվել[7]:

Պարաքվինն իր տեղեկագրում հույժ անհրաժեշտ էր համարում, թեկուզ միայն Գերմանիայի տնտեսական շահերի պաշտպանության համար գերմանական զորամասեր ուղարկել Բաքու եւ, բացի այդ, ստեղծել մի հանձնաժողով, որը կզբաղվեր գերմանացիների եւ այլոց դեմ կատարված ոտնձգությունների քննությամբ: Նման նախաձեռնությամբ փորձեց հանդես գալ Կովկասում գերմանական ներկայացուցչության ղեկավար գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնը: Տեղեկանալով Բաքվի իրադարձությունների մասին՝ սեպտեմբերի 20-ին նա մի շտապ հեռագիր ուղարկեց Նուրի փաշային՝ պահանջելով համաձայնություն տալ գերմանական գումարտակի հրավիրման համար, որը կզբաղվեր բացառապես այնտեղ գտնվող գերմանացիների պաշտպանության հարցերով[8]: Նույն օրը նա մի պաշտոնական գրություն ուղարկեց նաեւ Թիֆլիսում վրացական կառավարությանն առընթեր՝ Օսմանյան կայսրության զինվորական եւ դիվանագիտական ներկայացուցիչ Արդուլ Քերիմ փաշային՝ դրան կցելով Նուրի փաշային ուղղված իր հեռագրի պատճենը: «Հավաստի աղբյուրներից ստացած իմ տեղեկությունների համաձայն՝ օսմանյան զորքերի քաղաք մտնելուց անմիջապես հետո թաթարները սկսել են դաժան կոտորածն ու թալանը,- գրում էր գեներալը:- Առաջին հերթին այդ անգթություններն ուղղված են եղել հայերի դեմ, սակայն զոհերի թվում եղել են նաեւ բազմաթիվ այլազգիներ: Չնայած Նուրի փաշան ուներ բավականաչափ զորախմբեր այդ անգթություններին անմիջապես վերջ տալու համար՝ ինձ անհասկանալի պատճառներով նա ժամանակին համապատասխան միջոցառումներ չի ձեռնարկել, այնպես որ մինչեւ անգամ սեպտեմբերի 17-ի երեկոյան Բաքվում դեռ կարգուկանոն չէր հաստատվել»[9]:

---

6 Անդ, էջ 445:

7 Ըստ Պարաքվինի հաղորդման՝ բազմաթիվ հայերի խզակոթերով եւ մտրակներով «ինչպես անասունների նախիր» քշել եւ արգելափակել էին առանձին, այսպես կոչված, ճամբարներում, որտեղ նրանց դրությունը խիստ անմխիթար էր, եւ քաղաքում նաեւ իր մեկնման ժամանակ, այսինքն սեպտեմբերի 18-ին, շարունակվում էին կրակոցներն ու իրարանցումը: Անդ, էջ 446:

8 «Ես հավաստի աղբյուրներից տեղեկացել եմ,- գրում էր նա,- որ դժբախտաբար Բաքվում տեղի ունեցած ջարդերի ժամանակ քաղաքի գրավումից հետո բազմաթիվ գերմանացիներ եւ Գերմանիայի նախկին քաղաքացիներ նույնպես դաժանությունների զոհ են դարձել եւ կորցրել են իրենց ունեցվածքը: Հաշվի առնելով այն փաստը, որ Ձերդ Գերազանցությունը չի կարողացել պաշտպանել Գերմանիայի քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը, Գերմանական Կայսրության անունից պաշտոնապես պահանջում եմ տալ ձեր համաձայնությունը գերմանական գումարտակի հրավիրման համար, որի նպատակը կլինի բացառապես իմ համերկրացիների շահերի պաշտպանությունը: Ինչ վերաբերում է արդեն տեղի ունեցած հանցագործություններին՝ ես դրանց կանդրադառնամ իմ կառավարության տված ցուցումներից հետո: Սպասում եմ ձեր պատասխանին»: Անդ, հավելված 3, էջ 448:

9 Անդ, հավելված 2, էջ 447:

Գեներալն, ըստ այդմ, Աբդուլ Քերիմին խնդրում էր իր ազդեցությունը գործադրել, որպեսզի Նուրին համաձայներ գերմանական զումարտակ Բաքու ուղարկելու՝ իր առաջարկի հետ, իսկ մինչ այդ՝ գործնական օգնություն ցուցաբերել «այն խեղճ մարդկանց, ովքեր այս պահին տառապանքների են ենթարկվում կատաղի թաթարների կողմից եւ կարող են փրկություն ստանալ միայն օսմանյան կանոնավոր զորամիավորումների պաշտպանության միջոցով»[10]:

Սեպտեմբերի 20-ին Ֆոն Կրեսը մի գրություն ուղարկեց նաեւ Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովին՝ խնդրելով իր կառավարությանը տեղեկացնել, որ ինքը հարկադրված է լինելու հատուցում պահանջել Բաքվում թաթարների կողմից գերմանացիների եւ Գերմանիայի պաշտպանյալ հանդիսացող այլ անձանց հանդեպ իրագործված բռնարարքների համար[11]:

Ֆոն Կրեսի պաշտոնական գրություններին Աբդուլ Քերիմը գրավոր կերպով պատասխանեց սեպտեմբերի 21-ին, իսկ սեպտեմբերի 26-ին ստացվեց Նուրի փաշայի պատասխանը: Աբդուլ Քերիմը հավաստիացնում էր, որ Գերմանիայի քաղաքացիների եւ նրանց ունեցվածքի հանդեպ ոտնձգությունների վերաբերյալ գեներալին հասած լուրերը եղել են չափազանցված, եւ հայերի հանդեպ նույնպես ոչ մի դաժանություն չէր գործադրվել: Անհրաժեշտ արյունալի միջադեպերը, որոնք տեղի էին ունեցել քաղաքի գրավման ժամանակ, ըստ Քերիմի, այդպիսի իրավիճակներում միշտ էլ եղել են, դրանում արտասովոր ոչինչ չկար, եւ այդ դեպքերը ճիշտ չէր կոտորած անվանել: Հավատացնելով, որ Բաքվում ամեն բան արվել է դրանց կրկնումը կանխելու եւ կարգապահություն հաստատելու համար, նա գտնում էր, որ այնտեղ գերմանական զումարտակ ուղարկելու որեւէ անհրաժեշտություն չկար, եւ զումարտակի առկայությունն այնտեղ թուրքական կառավարության համար կստեղծեր միայն անհարմարություններ ու բամբասանքների տեղիք կտար[12]:

Նույն ոգով էր շարադրված նաեւ Նուրի փաշայի պատասխանը: Նա նույնպես հավաստիացնում էր, որ Ֆոն Կրեսի ստացած տեղեկությունները չէին համապատասխանում իրականությանը: Թուրքական զորքերը, ըստ Նուրիի, թշնամու համառ դիմադրության պայմաններում կարողացել էին միայն թեժ պայքարի գնով մտնել քաղաք: Որոշ մուսուլմաններ եւ հատկապես պարսիկներ, որոնք, իբրեւ թե՝ 1918 թ. մարտին հայերի կողմից իրականացված՝ մուսուլմանների կոտորածից հետո հուսահատ վիճակում էին գտնվում, օգտվելով առիթից, դիմել էին վայրագությունների, բայց բանակի կողմից շտապ միջոցառումներ էին ձեռնարկվել: Հարյուրավոր մեղավոր մուսուլմաններ դատապարտվել էին մահվան, եւ դրանից հետո քաղաքում անդորր էր տիրում: Եթե, այնուամենայնիվ, ինչ-որ ոտնձգություն էր տեղի ունեցել նաեւ քաղաքում գտնվող գերմանացիների հանդեպ, ապա, ըստ Նուրի փաշայի, Ադրբեջանի կառավարությունը պարտավոր էր փոխհատուցել պատճառված վնասները: Այս հավաստիացումներից հետո նա նույնպես պնդում էր, թե քանի որ թուրքական զորքերն արդեն կարգ ու կանոն էին հաստատել քաղաքում, անհրաժեշտություն չկար գերմանական զումարտակ ուղարկել այնտեղ[13] :

---

10 Անդ:

11 Անդ, հավելված 4, էջ 448-449: Այս դեպքում, իհարկե, խոսքը հայերին չէր կարող վերաբերել, քանի որ նրանք, ի տարբերություն վրացիների, գերմանական պաշտպանության ներքո չէին գտնվում:

12 Անդ, հավելված 5, էջ 449-450:

13 Անդ, հավելված 6, էջ 450-451:

Ինքնին հասկանալի է, որ Ֆոն Կրեսը, չբավարարվելով Աբդուլ Քերիմի եւ Նուրի փաշայի պարզաբանումներով, հարկ էր համարում Բաքվի դեպքերի եւ դրանցում Նուրի փաշայի ու թուրքական զորամասերի դերակատարության մասին տեղեկացնել նաեւ գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարությանը: Սեպտեմբերի վերջին նա այդօրինակ մի հեռագիր է ուղարկում գերմանական նավահրանոթային հրամկազմի ղեկավարությանը՝ խնդրելով այն փոխանցել նաեւ բանակի գլխավոր հրամանատարությանը: Հրամկազմի ղեկավարը, հոկտեմբերի 2-ին ստանալով հեռագիրը, այն, որպես «հույժ գաղտնի» տեղեկություն, ուղարկում է ինչպես գլխավոր հրամանատարությանը, այնպես էլ կանցլերին: Այնտեղ նշվում էր, որ Բաքու մտած թուրքական զորքն այնքան անփույթ է գործել, որ նավահանգստում գտնվող ավելի քան հարյուր թշնամական նավեր հասցրել են փախուստի դիմել, եւ միայն փոքրաթիվ նավեր են ընկել թուրքերի ձեռքը: Այնուհետեւ տեղեկացնելով Բաքվի գրավումից անմիջապես հետո թաթարական հրոսակների կողմից կոտորածների սանձազերծման մասին, ֆոն Կրեսն ընդգծում էր, որ թուրքական զորքը ոչ միայն ոչինչ չէր ձեռնարկել դրանք կասեցնելու համար, այլեւ նրա առանձին զորամասեր մասնակցել են այդ կոտորածներին, որոնց ժամանակ սպանվել են նաեւ շատ գերմանացիներ ու Գերմանիայի պաշտպանյալներ: Նշելով Դարաքվինի հանիրավի պաշտոնանկության, ինչպես եւ այն մասին, որ Նուրի փաշան մերժել է Բաքվում գերմանացիների կյանքի եւ գույքի ապահովման համար այնտեղ գերմանական զորամաս ուղարկելու մասին իր դիմումը՝ Ֆոն Կրեսը հեռագրում միաժամանակ խնդրում էր, որ նույն նախաձեռնությամբ հանդես գար նաեւ գլխավոր հրամանատարությունը[14]:

Ինչեւէ, ինչպես վկայում են Բաքվի իրադարձությունները, Թուրքիան ունակ էր քամահրանքով վերաբերվել մինչեւ իսկ Գերմանիայի քաղաքացիների կյանքի եւ գույքի ապահովությանը՝ այդ հարցում ի հայտ եկած «թերացումները» պատճառաբանելով իրադրության անվերահսկելիությամբ եւ այլ պատրվակներով:

Ինչ վերաբերում է գերմանական կառավարությանը, ապա արդեն սեպտեմբերի 29-ին գերմանական հրամանատարության գլխավոր շտաբում կայսր Վիլհելմ II-ի, պետքարտուղար ֆոն Հինցեի, կանցլեր իշխան ֆոն Հերտլինգի, բանակի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգի եւ շտաբի պետ, բանակի «գլխավոր ստրատեգ» Էրիխ Լուդենդորֆի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում միանշանակորեն ընդունվել էր պատերազմում Գերմանիայի անհուսափելի պարտության փաստը, եւ նրանք զբաղված էին միայն «ջրից չոր դուրս գալու» համար ուղիներ փնտրելով: Ըստ այդմ՝ նույն խորհրդակցությունում ընդունվեց որոշում նախկինում ընդդիմական կուսակցությունների միջոցով նոր՝ պառլամենտական կառավարության ձեւավորման մասին, որը եւ պետք է ստանձներ խայտառակ պարտության պայմաններում զինադադարի կնքման եւ հաշտության պայմանագրի ստորագրման ողջ պատասխանատվությունը[15]: Ինքնին հասկանալի է, որ ստեղծված իրադրությունում Գերմանիայից հայկական խնդրի առնչությամբ որեւէ միջամտություն այլեւս չէր կարող ի հայտ գալ:

---

14 Տե՛ս "Die Armenische Frage und der Genozid an den Armeniern". Dokumente aus dem politischen Archiv des deutschen AuswԴrtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 590-591:

15 Տե՛ս "Informationen zur politischen Bildung", Ներարբեիտեդ Neuauflage, ՄԲnchen, 2003, էջ 3:

Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունն, այնուամենայնիվ, հույսեր էր փայփայում ստանալու արքայազն Մաքս ֆոն Բադենի գլխավորությամբ հոկտեմբերի սկզբին կազմավորված նոր կառավարության աջակցությունը՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Այդ հարցում փորձում էր իր աջակցությունը բերել նաև գեներալ ֆոն Կրեսը: Հոկտեմբերի 16-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանը Բաքվի հայ բնակչության ջարդերի վերաբերյալ մի նամակ-բողոք ուղարկեց Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, իսկ հաջորդ օրը դրա թարգմանված պատճենը հանձնեց ֆոն Կրեսին՝ խնդրելով Գերմանիայի կառավարությանը տեղեկացնել նամակի եւ Բաքվի գրավման ժամանակ տեղի ունեցած անլուր դաժանությունների առնչությամբ հայկական կառավարության կողմից արտահայտված բողոքների մասին: Նույն օրը եւեթ՝ հոկտեմբերի 17-ին, բողոքագիրը ֆոն Կրեսն ուղարկեց նաեւ կանցլեր Մաքսին[16] : «Որպես Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ,- նշում էր Ջամալյանն այդ նամակում,- պատիվ ունեմ հայտնելու Վրաստանի կառավարությանն առընթեր Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության հավաստի տեղեկությունների համաձայն՝ Բաքվի գրավմանը հաջորդել է մուսուլմանական ամբոխի կողմից հայ խաղաղ բնակչության դաժան կոտորածը՝ առանց տարիքային ու սեռային խտրության: Անխղճորեն թալանվել են հայ բնակիչների բնակարանները: Զոհերի թիվը հասնում է 25-ից 30 հազարի: Երեք օր շարունակ դաժան բարբարոսությունները չեն դադարել, եւ միայն դրանից հետո իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին, ու տեղում բռնված մի քանի ավազակներ պատժվեցին: Ադրբեջանի կառավարության ձեւավորման ընթացքում ձերբակալվել են բազմաթիվ հայեր, հատկապես մտավորականներ: Ինչ վերաբերում է ունեւոր հայերին, դրամաշորթները նրանց ստիպել են մեծ գումարներ վճարել՝ սպառնալով մատնել իշխանություններին: Լքված, խնամքից զուրկ վիրավորները, փողոցներում մնացած երեխաները լրացնում էին քաղաքի դաժան պատկերը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ խնդրում եմ ձեզ Ադրբեջանի կառավարությանը հայտնել Հայաստանի Հանրապետության բողոքը հայ խաղաղ ազգաբնակչության կոտորածի դեմ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նաեւ պնդում է, որ մեղավորները պետք է խստորեն պատժվեն, եւ պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկվեն ողջ մնացած դժբախտ բնակչության դեմ իրականացվող բռնություններին վերջ դնելու համար»[17]:

Հոկտեմբերի 19-ին Ա. Ջամալյանը դարձյալ մի բողոքագիր է ներկայացնում ֆոն Կրեսին, որտեղ ողջունելով Բաքվի հայ բնակչության կոտորածը կասեցնելու համար նրա գործադրած ջանքերը՝ նրան խնդրում էր դարձյալ գերմանական կառավարությանը տեղեկացնել այնտեղ տիրող իրադրության մասին: Նա մասնավորապես նշում էր, որ Բաքվի հայ բնակչությունը շարունակում էր մնալ նույն «մղձավանջի» մեջ: Այնտեղ հայերի նկատմամբ անմարդկային արարքները շարունակվում էին, եւ մշտապես իշխում էր սարսափի մթնոլորտը: Ընդգծելով, որ բոլոր ազդեցիկ հայ մտավորականները ձերբակալված էին եւ աներեւա-

16 Տես "Deutschland und Armenien 1914-1918...", էջ 436-438:
17 Անդ:

կայելի խոշտանգումների էին ենթարկվում, Ջամալյանը թվարկում էր մի շարք մտավորականների անուններ, որոնք այդ առնչությամբ հաղորդվել էին իրեն[18] : Նա միաժամանակ գեներալին հավաստիացնում էր, որ բանտարկվածների մեծագույն մասը քաղաքականության հետ ոչ մի կապ չուներ: Նրանք, ովքեր կազմակերպել էին Բաքվի հայերի պաշտպանությունը, ժամանակին հեռացել էին քաղաքից, եւ մտավորականների ձերբակալությունը նա համարում էր «անիմաստ ու դաժան վրեժխնդրություն»: Մ՝իաժամանակ հայտնելով, որ, ըստ իրեն հասած լուրերի, Բաքվի իշխանությունները մտադիր էին հայերին հավաքել համակենտրոնացման ճամբարներում, որտեղ նրանք մահվան բաժին էին դառնալու, Ջամալյանը գեներալին թախանձագին խնդրում էր «հայ ժողովրդին պաշտպանել նրանց կյանքի եւ ունեցվածքի հանդեպ կատարվող ոտնձգություններից»:

Հատկանշական է, որ ֆոն Կրեսը, գիտակցելով հանդերձ, որ առանց Բեռլինի եւ բանակի գլխավոր հրամանատարության զործուն աջակցության՝ թուրքերի վրա էական ազդեցություն գործել չէր կարող, սեփական նախաձեռնությամբ Բաքու է ուղարկում մի գերմանական պատվիրակություն ավագ լեյտենանտ բարոն ֆոն դեր Գոլթցի ղեկավարությամբ՝ նրանց հանձնարարելով անել հնարավորը հայերին օգնելու համար: Իսկ եթե դա հնարավոր չլիներ, ապա գեներալը հույս էր փայփայում, որ պատվիրակությունն իր ներկայությամբ գոնե բարոյական ճնշում կգործադրեր թուրքական զորքերի հրամանատարության վրա՝ նրան զերծ պահելով հետագա կամայականություններից[19] : Բացի այդ, ֆոն Կրեսը հոկտեմբերի 21-ին կանցլերին է ուղարկում նաեւ Ջամալյանի նշված՝ հոկտեմբերի 19-ի բողոքագիրը[20]:

Նրա ձեռնարկումները, սակայն, էական արդյունք չտվեցին, եւ դա վկայում էր նաեւ Բեռլինի հայկական պատվիրակության կողմից, Համո Օհանջանյանի ստորագրությամբ հոկտեմբերի 30-ին Գերմանիայի արտգործնախարարությանը ներկայացված ուղերձը: Վկայակոչելով հայրենիքից ստացված տեղեկությունները՝ Համո Օհանջանյանը նախ անդրադառնում էր Բաքվի գրավումից հետո այնտեղ հայ բնակչության դեմ սանձազերծված հալածանքներին ու կոտորածներին[21], որից հետո նա բառացի հղում էր կատարում Հալիլ փաշային կցված մի գերմանացի սպայի՝ Հայաստանի հանրապետության Թ-իֆլիսի ներկայացուցչին հաղորդած տեղեկություններից: «Բարբարոսությունը, որ կատարվեց Բաքվում, հնարավոր չէ նկարագրել,- նշել էր սպան: - Իմ ուժերից վեր է, որպես քրիստոնյա եւ եւրոպացի, հանգիստ կերպով դիտել նման ոճրագործությունները: Ես հենց այսօր երեկոյան Հալիլ

18 Խոսքը վերաբերում էր Տիգրան Զաքարյանին (բժշկագիտության թեկնածու), Ջումշուդ Հարությունյանցին (նախկին քաղաքապետ), Արտեմ Եղիազարյանին, Կոստանդին Քալանթարյանին (ճարտարագետ), Սամսոն Ամիրովին, Սերգեյ Մելիքովին, Գեորգ Մելիքովին, Դյուտր Զուրաբովին, Ստեփան Տիգրանյանին (փաստաբան), Միքայել Աթաբեկյանին (Կովկասի բանկի կառավարիչ), Կոստանդին Ղիսանյանին (ճարտարագետ), Մանանդյանին (փաստաբան), Ղուլարյանին (առեւտրային բանկի կառավարիչ) եւ Գրիգոր Օհանջանյանին: Տե՛ս "Deutschland und Armenien 1914-1918...", էջ 439:

19 Անդ, էջ 440:

20 Անդ, էջ 438-440:

21 «Հազարավոր խաղաղ հայ բնակիչներ, այդ թվում անվանի հայ մտավորականներ, կանայք, երեխաներ եւ ծերունիներ սպանդի ենթարկվեցին,- նշված էր տեղեկագրում:- Հայերի բնակարանները, չնչին բացառություններով կողոպտվեցին, բանտերը լցվեցին հայերով, որտեղ նրանք դեռ այժմ էլ սարսափելի տառապանքների են մատնված: Ազերիներն ու թաթարները պնդում են, որ իրենց թույլատրվել է երեք օր շարունակ սպանել ու թալանել: Եվ նրանք դա արեցին հիմնավորապես ու անխնա կերպով»: "Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...", էջ 593-594:

փաշային կներկայացնեմ իմ հրաժարականը: Թե որքան հայեր են սպանվել, ես ճշգրիտ չեմ կարող ասել: Միգուցե նրանց թիվը շատ մեծ չէ, բայց սպանողը կատարվեց բարբարոսական կերպով, եւ ամբողջ քաղաքը թալանվեց: Ես մի փողոցում տեսա 20-ից 35 շղթայված հայերի եւ նրանց կողքին մի պահակի: Նրանց ճակատագիրը պարզ էր ինձ, եւ ինձնից մեծ ջանքեր պահանջվեցին նրանց փրկելու համար: Բայց քանի՛ այդպիսի դեպքերում են մարդիկ զրկված եղել փրկարար օգնությունից: Երբ մենք փողոցներով քայլում էինք, տների միջից շարունակ օգնության ճիչեր էինք լսում: Մենք մի քանի անգամ կարողացանք օգնության հասնել, բայց որքա՜ն դեպքերում էլ ոչ...: Մենք միայն չորս գերմանացիներ էինք եւ չէինք կարող մեծ օգնություն ցուցաբերել, քանի որ, ի վերջո, մեր հանդեպ նույնպես (մահմեդականների) վարքագիծը ապշեցուցիչ էր: Հալիլ փաշան ուղղակիորեն մեղավոր չէ այդ ոճրագործությունների համար: Ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Նուրի փաշայի եւ նրա շտաբի վրա: Եթե նրանք ուզենային, կարող էին արգելել կոտորածներն ու կողոպուտը: ... Ես այն տպավորությունն ունեմ, որ նախճիրը նախապես պլանավորված էր: Դա էր պատճառը, որ թուրքերն ամեն ինչ արեցին՝ արշավին (նկատի ունի Բաքվի վրա հարձակումը - Ա. Հ.) գերմանական զորամասերի մասնակցությունը խոչընդոտելու համար»[22] :

Հ. Օհանջանյանը, ուղերձին կից ներկայացնելով Նուխիի ու Արեշի (Ելիզավետպոլ) հայ հոգեւորականների տեղեկությունները, ինչպես եւ Բաքվում հետազայում կատարված դեպքերին վերաբերող քաղվածքներ Թիֆլիսի «Кавказское Слово» թերթից, միաժամանակ ընդգծում էր, որ Բաքվի գրավումից հետո հայերի կոտորածներ են տեղի ունեցել նաեւ Նուխիի եւ Արեշի շրջաններում: Ըստ նրա հաղորդման՝ այնտեղի հայ քահանաներն ու երեւելիները սպանվել էին, կանայք եւ աղջիկները անարգվել, իսկ երեխաներին, մի տեղ հավաքելով, մահակներով էին սպանել: Մահմեդական հոգեւորականները մինչեւ անգամ այն հայերին, որոնք իրենց կյանքը փրկելու խնդրանքով նրանց դիմել էին եւ համաձայնել իսլամն ընդունել, պատասխանել էին, թե իրենք «Նուխիի եւ Արեշի շրջաններում հայերին նույնիսկ մարդկանց հիշողությունից առհասարակ ջնջելու» էին:

Այնուհետեւ Օհանջանյանը արտգործնախարարությանը ներկայացնում էր Հայաստանի հանրապետության՝ Թիֆլիսի ներկայացուցչից իր ստացած տեղեկություններն այն մասին, որ թուրքերը մտադրվել էին Ադրբեջանից վերադառնալու ժամանակ այնտեղ թողնել թուրքական հինգերորդ եւ տասնհինգերորդ դիվիզիաները, որպեսզի նրանք, իբրեւ թաթարական հանրապետության զինվորներ, թաթարական համազգեստով մասնակցեին հայերի, մասնավորապես Ղարաբաղի հայ բնակչության բնաջնջմանն ու թալանին: «Արդեն այժմ էլ Ղարաբաղից եկող լուրերը խիստ անհանգստացուցիչ են, - գրված էր այնուհետեւ ուղերձում: - Թուրքական զորամասերը Ասկերանի վրայով առաջ են շարժվել եւ ոմբակոծում են հայկական գյուղերը: Միանգամայն պարզ է, որ թուրքերը այդ տարածքում նույնպես նախատեսել են հայ բնակչությանը բնաջնջել: Իմ կառավարությունը ինձ հանձնարարել է բողոքել թուրքական զորքերի եւ թաթարների այդ նոր անմարդկային գործողությունների դեմ»[23]:

Նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին, սակայն, Թուրքիան հարկադրված եղավ զինադադար

22 Անդ, էջ 594:
23 Անդ, էջ 594-595:

կնքել, եւ իրավիճակը որոշակիորեն պետք է փոխվեր: Հատկանշական է, որ այդ իսկ օրը գեներալ ֆոն Կրեսը կանցլերին է ուղարկում Բաքվի հայերի կոտորածի վերաբերյալ իր մոտ գտնվող նյութերը, նաեւ այդ առնչությամբ մի կողմից իր եւ մյուս կողմից թուրքական հրամանատարների, դիվանագետների, ինչպես եւ ադրբեջանական կառավարության միջեւ տեղի ունեցած գրագրությունը, որպեսզի դրանք արխիվավորվեին: Նա միաժամանակ արձանագրում էր, որ այդ կոտորածները կանխելու իր առաջարկները չեն իրագործվել սոսկ թուրքերի մերժողական կեցվածքի պատճառով, եւ որ ինքը դրանց իրագործումը հարկադրելու համար որեւէ լծակ չի ունեցել[24]:

24 "Deutschland und Armenien 1914-1918...", p. 440.